Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2019 թվականի մարտի 7-ի նիստում,
արձանագրություն N 9,
գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի պաշտոնակատար

_____ Դ. Ա. Հայրապետյան

_____ 2019 թ.

ԿԱՐԳ
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ ՀՊՏՀ) վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման պլանավորման և իրականացման ընթացակարգը:

2. Սույն կարգը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների և ՀՊՏՀ կանոնադրության և ներքին այլ փաստաթղթերի հիման վրա:

II. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

3. ՀՊՏՀ մասնագիտությունների կրթական ծրագրերով և դասընթացների ծրագրերով նախատեսված վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունն իրականացվում է՝ ըստ վերջնարդյունքի (իմացության) բաղադրիչի (գիտելիք, հմտություն, կարողություն) տիպի:

4. Կրթական և դասընթացների ծրագրերի ընդհանրական և առարկայական վերջնարդյունքների բաղադրիչները մեթոդների ընտրության նպատակով

դասակարգվում են հինգ տիպերի՝ գիտելիք, գործնական հմտություն, ինտելեկտուալ հմտություն, փոխակերպվող կարողություն և սոցիալական կարողություն:

5. Կրթական և դասընթացների ծրագրերի վերջնարդյունքների բաղադրիչներից յուրաքանչյուրի տիպը որոշվում է որակավորումների ազգային շրջանակով (ՈԱՇ) սահմանված բնութագրիչներին և տիպերի նկարագրերին համապատասխան՝ ըստ հետևյալ աղյուսակի.

Իմացության բաղադրիչի տիպը	ՈԱՇ 6-րդ մակարդակի բնութագրիչները	ՈԱՇ 7-րդ մակարդակի բնութագրիչները	Պարզեցված նկարագիրը
1. Գիտելիք	Գիտելիք		Գիտելիքը հասկացություններին, տեսություններին, մոտեցումներին, սկզբունքներին, օրինաչափություններին, մեթոդներին, գործիքներին ծանոթ լինելը և դրանք հասկանալն է: Գնահատվում է իմանալը և հասկանալը: Ձևավորվում է տեղեկությունների ընդունման, հաղորդման, բացատրման, քննարկման միջոցով:
	Մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն, առաջադեմ գիտելիքներ	Խորը մասնագիտացված գիտելիքներ, այդ թվում՝ տվյալ ոլորտի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, որոնք կիրառվում են ուսումնառության, հետազոտության և աշխատանքի ընթացքում Տվյալ մասնագիտական բնագավառի և միջմասնագիտական ոլորտների տեսությունների, առաջավոր սկզբունքների ու մեթոդների իմացություն	
2. Գործնական հմտություն	Գիտելիքի կիրառման հմտություններ		Գործնական հմտությունը մասնագիտական գործունեության շրջանակից բխող գործողություններ իրականացնելու հաստատված ունակությունն է: Գնահատվում է գործողություններ իրականացնելը: Ձևավորվում է փորձի, սիմուլյացիայի միջոցով:
	Հմտություններ, որոնք ցուցաբերում են նորարարական ու առաջադեմ մոտեցումներ և անհրաժեշտ են ձեռք բերված գիտելիքը և իմացությունը մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած անկանխատեսելի խնդիրները լուծելիս	Առանցքային մասնագիտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ հետազոտական ու նորարարական գործունեություն իրականացնելիս՝ տարբեր ոլորտների գիտելիքը համակցելու և նոր գիտելիք ստեղծելու համար, նոր և անծանոթ իրադրություններում	

		տեսական ու գործնական խնդիրներ լուծելու համար	
	Հաղորդակցման, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) և տվյալների հետ աշխատելու հմտություններ		
	Մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքը դյուրացնելու համար ՏՀՏ-ներ կիրառելու հմտություններ	Մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներում բարդ խնդիրներ լուծելիս և հետազոտություններ կատարելիս ՏՀՏ-ները վարժ կիրառելու հմտություններ	
3. Ինտելեկտուալ հմտություն	Տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները և դրանց լուծումները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացատրելու հմտություններ	Մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանն իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու հմտություններ	Ինտելեկտուալ հմտությունը տեղեկությունների ընկալման, մշակման, դրանց հիման վրա եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հաստատված ունակությունն է: Գնահատվում է եզրահանգումներ անելը և պատասխան գործողություններ մշակելը: Ձևավորվում է փորձի, սիմուլյացիայի միջոցով:
	Մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններ՝ հիմնավորված դատողություններ անելու համար	Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալները խորը վերլուծելու և գնահատելու համար՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով	
	Ընդհանրական իմացական հմտություններ		
	Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու		

	հմտություններ՝ դրսևորելով քննադատական մտածողություն		
	Հմտություններ, որոնք պահանջում են ստեղծագործական մոտեցում ոլորտի մասնագիտական խնդիրները բացահայտելիս և տարբեր լուծումներ առաջադրելիս	Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները հետազոտելու, արդիական գաղափարներ ու մոտեցումներ առաջադրելու, ինչպես նաև ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված նորարարական ու ստեղծագործական լուծումներ առաջարկելու համար	
4. Փոխակերպվող կարողություն	Կարողունակություն, ինքնուրույնություն և պատասխանատվություն		Փոխակերպվող կարողությունը կարիերայի իրավիճակային պահանջներից բխող գիտելիքի և հմտությունների ինքնուրույն ձևավորման ունակությունն է: Գնահատվում է գիտելիք և հմտություններ ինքնուրույն ձևավորելը: Ձևավորվում է ինքնուրույն աշխատանքի միջոցով:
	Ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն	Մասնագիտական կամ ուսումնառության ոլորտում ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ և անծանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ու վերափոխման ռազմավարական նոր մոտեցումներ	
	Որոշել հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները՝ ելնելով սեփական պահանջմունքներից	Գնահատել իր շարունակական կրթության և մասնագիտական զարգացման կարիքները՝ արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում, ունակ լինել շարունակելու ուսումնառությունն արագ փոփոխվող միջավայրերում	

5. Սոցիալական կարողություն	Կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնական միջավայրում, ստանձնել պատասխանատվություն առանձին անհատների կամ թիմի մասնագիտական զարգացման համար	Նպաստել մասնագիտական գիտելիքի զարգացմանը Ստանձնել թիմի նպատակների իրագործումը վերահսկելու պատասխանատվություն	Սոցիալական կարողությունն այն սոցիալական միավորների զարգացման ունակությունն է, որոնց պատկանում է սոցիալական կարողության կրողը: Գնահատվում է սոցիալական միավորները զարգացնելը: Ձևավորվում է հանրային և խմբային շահերի իրացմանն ուղղված աշխատանքի միջոցով:
	Գիտակցել անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը	Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը Գործել՝ զուգակցելով հայոց ազգային արժեհամակարգն ու պատմամշակութային փորձը համամարդկային արժեքների հետ	

III. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6. Դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) շրջանակներում կիրառվող գնահատման համակարգը պետք է ներառի գնահատման մեթոդները, չափանիշները, չափորոշիչները, ձևերը:

7. Դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդները պետք է ուղղված լինեն դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) ծրագրով նախատեսված բոլոր վերջնարդյունքների ընթացիկ և վերջնական ձևավորվածության մակարդակի գնահատմանը՝ չսահմանափակվելով միայն գիտելիքի ստուգմամբ դրա պարզ վերարտադրության միջոցով:

8. Դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդներն ընտրվում են՝ ըստ սահմանված վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի և հետևյալ աղյուսակի.

Վերջնարդյունքի բաղադրիչի տիպը	Գնահատման ընդունելի մեթոդները

1. Գիտելիք	**Գնահատվում է իմանալը և հասկանալը:** Գիտելիքը կամ դրա առանձին մասերն իմանալու և հասկանալու ստուգում բանավոր կամ գրավոր վերարտադրմամբ Գիտելիքը կամ դրա առանձին մասերն իմանալու և հասկանալու ստուգում բազմընտրանքային թեստերով Գիտելիքի գնահատում ռեֆերատների միջոցով Գիտելիքը հասկանալու ստուգում դրա վերաբերյալ քննարկումների միջոցով
2. Գործնական հմտություն	**Գնահատվում է գործողություններ իրականացնելը:** Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում իրավիճակային խնդիրների լուծման հիման վրա Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում դերային խաղերում դրսևորած արդյունքների հիման վրա Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում իրական և պայմանական իրավիճակներում սահմանափակ տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա Գործողություններ իրականացնելու հմտության գնահատում իրական և պայմանական իրավիճակներում բաց տեղեկությունների պայմաններում դրսևորած արդյունքների հիման վրա
3. Ինտելեկտուալ հմտություն	**Գնահատվում է եզրահանգումներ անելը և պատասխան գործողություններ մշակելը:** Տեղեկությունների մշակման հիման վրա եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում իրավիճակային խնդիրների լուծման հիման վրա Տեղեկությունների մշակման հիման վրա եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում դերային խաղերում կատարված

	վերլուծությունների և ընդունված որոշումների հիման վրա Տեղեկությունների մշակման հիման վրա եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում իրական և պայմանական իրավիճակների վերլուծության հիման վրա՝ սահմանափակ տեղեկությունների պայմաններում Տեղեկությունների մշակման հիման վրա եզրահանգումներ անելու և պատասխան գործողություններ մշակելու հմտության գնահատում իրական և պայմանական իրավիճակների վերլուծության հիման վրա՝ բաց տեղեկությունների պայմաններում
4. Փոխակերպվող կարողություն	**Գնահատվում է գիտելիք և հմտություններ ինքնուրույն ձևավորելը:** Անհատական կամ թիմային թեմատիկ աշխատանքի կամ նախագծի շրջանակներում ինքնուրույն ձևավորած նոր գիտելիքի՝ թեմային համապատասխանության գնահատում Անհատական կամ թիմային թեմատիկ աշխատանքի կամ նախագծի շրջանակներում ինքնուրույն ձևավորած նոր հմտությունների՝ թեմային համապատասխանության գնահատում Ինքնուրույն ընտրված և մշակված լրացուցիչ ուսումնասիրության շրջանակներում ձևավորված նոր գիտելիքի և (կամ) հմտությունների օգտակարության գնահատում
5. Սոցիալական կարողություն	**Գնահատվում է սոցիալական միավորները զարգացնելը:** Թիմային հանձնարարությունների կատարման ընթացքում ստանձնած դերից բխող արդյունքների գնահատում Իրական և պայմանական իրավիճակներում կատարված առաջարկությունների օգտակարության գնահատում Հանրային շահերից բխող հետազոտության և դրա արդյունքների օգտակարության գնահատում:

9. Գնահատման յուրաքանչյուր մեթոդի գործադրում պետք է հիմնված լինի գնահատման նախապես սահմանված, գնահատողին և գնահատվողին հայտնի չափանիշների և չափորոշիչների վրա, որոնք պետք է բնութագրեն վերջնարդյունքի ձևավորվածության աստիճանը և համապատասխանեն գնահատման մեթոդներին: Գնահատման չափանիշներն այն գործոններն են, որոնք ենթակա են գնահատման (օրինակ՝ կատարված հետազոտության ինքնուրույնության աստիճանը, համապատասխան գրականության ուսումնասիրվածության աստիճանը, կատարված առաջարկների կիրառելիությունը և այլն), իսկ չափորոշիչները տարբեր գնահատականների համար պահանջվող քանակական կամ որակական նշաձողերն են՝ ըստ չափանիշների (օրինակ՝ կատարված հետազոտության ինքնուրույնությունը գնահատելիս բավարար կարող է գնահատվել շարադրանքի ընդհանուր ծավալի մինչև 10 տոկոս ուղղակի մեջբերումներ պարունակող հետազոտությունը):

10. Գնահատման ձևը գնահատման գործընթացի կազմակերպման ձևաչափն է (օրինակ՝ բանավոր քննություն, գրավոր ստուգում, թեստեր, հետազոտական արդյունքի պաշտպանություն և այլն): Գնահատման ձևերը սահմանվում են կրթական ծրագրով և դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) ծրագրերով: Գնահատման ձևերը կարող են կազմակերպվել գնահատման մեկ կամ մի քանի մեթոդների գործադրմամբ:

IV. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

11. Ուսումնառության մեթոդների կազմը և դրանցից յուրաքանչյուրի գործադրման նպատակադրված ծավալը որոշվում են՝ ըստ դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի և դրանց ձևավորման աշխատատարության:

Օրինակ՝ եթե դասընթացի համար որպես վերջնարդյունքների բաղադրիչներ նախատեսված են գիտելիք, գործնական հմտություն և փոխակերպվող կարողություն, ապա ուսումնառողը պետք է անհրաժեշտ ժամանակ հատկացնի գիտելիք ձևավորող ուսումնառության մեթոդների գործադրմանը (օրինակ՝ լսի դասախոսություններ, կարդա մասնագիտական գրականություն), գործնական հմտություններ ձևավորող ուսումնառության մեթոդների գործադրմանը (օրինակ՝ մասնակցի գործարար խաղերի, լուծի համապատասխան խնդիրներ) և փոխակերպվող կարողություններ ձևավորող ուսումնառության մեթոդների գործադրմանը (օրինակ՝ աշխատի սեփական նախագծի վրա):

12. Ուսումնառության մեթոդների կազմը և դրանցից յուրաքանչյուրի գործադրման նպատակադրված ծավալը պետք է նախապես հայտնի լինեն ուսումնառողին, իսկ

անհրաժեշտ ուսումնական նյութերը (դասագիրք, ուսումնական ձեռնարկ, դասախոսությունների տեքստ) լինեն հասանելի կամ ժամանակին տրամադրվեն դասավանդողի կողմից: Դասընթացի շրջանակում ուսումնառության ընթացքում պետք է ապահովվի ուսումնառողի հնարավորինս համաչափ բեռնվածություն՝ յուրաքանչյուր թեմայի համար նախապես սահմանված հանձնարարությունների միջոցով: Ուսումնառության մեթոդների լրացուցիչ գործադրման՝ անհատական առաջադիմությամբ պայմանավորված անհրաժեշտության մասին ուսումնառողը ևս պետք է տեղեկացվի դասավանդողի կողմից:

13. Դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) շրջանակներում կիրառվող ուսումնառության մեթոդներն ընտրվում են՝ ըստ սահմանված վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի և հետևյալ աղյուսակի.

Վերջնարդյունքի բաղադրիչի տիպը	Ուսումնառության ընդունելի մեթոդները
1. Գիտելիք	**Ձևավորվում է տեղեկությունների ընդունման, հաղորդման, բացատրման, քննարկման միջոցով:** Գրականության և ուսումնական նյութերի ընթերցում, ուսումնական ֆիլմերի դիտում Դասախոսության ունկնդրում՝ ինտերակցիայի հնարավորությամբ Ընդունած տեղեկությունների համակարգում և ներկայացում Ընդունած տեղեկությունների քննարկում դասավանդողի հետ Ընդունած տեղեկությունների սեմինարային քննարկում
2. Գործնական հմտություն	**Ձևավորվում է փորձի, սիմուլյացիայի միջոցով:** Իրավիճակային խնդիրների լուծում Դերային խաղերի մասնակցում Իրական և պայմանական իրավիճակներում պահանջվող հմտության գործադրում Իրական և պայմանական իրավիճակներում պահանջվող հմտության գործադրման փորձի ուսումնասիրություն

3. Ինտելեկտուալ հմտություն	**Ձևավորվում է փորձի, սիմուլյացիայի միջոցով:** Իրավիճակային խնդիրների լուծում Դերային խաղերի մասնակցում Իրական և պայմանական իրավիճակների վերլուծություն Հետազոտական հանձնարարությունների կատարում
4. Փոխակերպվող կարողություն	**Ձևավորվում է ինքնուրույն աշխատանքի միջոցով:** Անհատական կամ թիմային թեմատիկ աշխատանքի կամ նախագծի իրականացում Ինքնուրույն ընտրված և մշակված լրացուցիչ ուսումնասիրության իրականացում
5. Սոցիալական կարողություն	**Ձևավորվում է հանրային և խմբային շահերի իրացմանն ուղղված աշխատանքի միջոցով:** Թիմային հանձնարարությունների կատարման ընթացքում սոցիալական կարողություն ձևավորող դերի ստանձնում Իրական և պայմանական իրավիճակներում խմբային և հանրային շահերից բխող առաջարկությունների կատարում Հանրային շահերից բխող հետազոտության իրականացում

V. ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

14. Դասավանդման մեթոդների կազմը և դրանցից յուրաքանչյուրի գործադրման նպատակադրված ծավալը որոշվում են՝ ըստ դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի, վերջնարդյունքների ընթացիկ ձևավորվածությունը գնահատող մեթոդների և ուսումնառության՝ դասավանդման անհրաժեշտություն պայմանավորող մեթոդների: Վերջինս նշանակում է, որ դասավանդման մեթոդներն ածանցվում են ուսումնառության մեթոդներից, և դասավանդման ընթացքում ուսումնառողը պետք է լինի անընդհատ ուսումնառության գործընթացում: Ուսումնառության գործընթաց չենթադրող դասավանդումը

դիտարկվում է՝ որպես սույն կարգի խախտում (օրինակ՝ թելադրությամբ դասախոսության տեքստ գրելիս ուսումնառողն ուսումնառության գործընթաց չի իրականացնում, հետևաբար՝ թելադրության տեսքով դասախոսության անցկացումը սույն կարգի խախտում է):

15. Դասավանդման մեթոդների կազմը և դրանցից յուրաքանչյուրի գործադրման նպատակադրված ծավալը պետք է նախապես հայտնի լինեն ուսումնառողին և դասավանդողին: Ուսումնառողների անհատական կամ խմբային առաջադիմությամբ պայմանավորված անհրաժեշտության դեպքում դասավանդման մեթոդները և դրանց գործադրման ծավալները կարող են ճշգրտվել:

16. Դասընթացի (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) շրջանակներում կիրառվող դասավանդման մեթոդներն ընտրվում են՝ ըստ սահմանված վերջնարդյունքների բաղադրիչների տիպերի և հետևյալ աղյուսակի.

Վերջնարդյունքի բաղադրիչի տիպը	Դասավանդման ընդունելի մեթոդները
1. Գիտելիք	Գրականության, ուսումնական նյութերի, ֆիլմերի հանձնարարում Դասախոսություն՝ ինտերակցիայի հնարավորությամբ Ուսումնառողի ընդունած տեղեկությունների համակարգման և ներկայացման վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում Ուսումնառողի ընդունած տեղեկությունների քննարկում ուսումնառողի հետ Սեմինարային քննարկումների կազմակերպում և հետադարձ կապի տրամադրում
2. Գործնական հմտություն	Իրավիճակային խնդիրների առաջադրում Դերային խաղերի կազմակերպում Պահանջվող հմտության գործադրման համար անհրաժեշտ պայմանական իրավիճակների սիմուլյացիա և իրական իրավիճակների հասանելիության ապահովում Իրական և պայմանական իրավիճակներում պահանջվող հմտության գործադրման փորձի քննարկման կազմակերպում
3. Ինտելեկտուալ հմտություն	Իրավիճակային խնդիրների առաջադրում

	Դերային խաղերի կազմակերպում Իրական և պայմանական իրավիճակների վերաբերյալ տեղեկությունների ապահովում և դրանց վերլուծության վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում Հետազոտական հանձնարարությունների առաջադրում
4. Փոխակերպվող կարողություն	Անհատական կամ թիմային թեմատիկ աշխատանքի կամ նախագծի հանձնարարում՝ ուսումնառողի կարիքներին համապատասխան Ինքնուրույն ընտրված և մշակված լրացուցիչ ուսումնասիրության վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում
5. Սոցիալական կարողություն	Թիմային հանձնարարությունների առաջադրում, դրանց կատարման ընթացքում դերերի բաշխում և հետադարձ կապի տրամադրում Իրական և պայմանական իրավիճակների վերաբերյալ տեղեկությունների ապահովում և ուսումնառողի առաջարկությունների վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում Հանրային շահերից բխող հետազոտության հանձնարարում և հետադարձ կապի տրամադրում

VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

17. Ուսումնառության վերջնարդյունքներին դասավանդման, ուսումնառության և գնահատման համապատասխանության ապահովման գործընթացը բաղկացած է մեթոդների ընտրության, ըստ անհրաժեշտության՝ ընտրության հիմնավորման, ընտրված մեթոդների հաստատման, գործադրման, գործադրման նկատմամբ վերահսկողության, համապատասխանության գնահատման և վերանայման փուլերից:

18. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունն իրականացվում է մասնագիտությունների կրթական ծրագրերի և դասընթացների (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչի) ծրագրերի հեղինակների կողմից՝

համապատասխան ամբիոնի վարիչի կամ կրթական ծրագրի ղեկավարի ընդհանուր վերահսկողությամբ և սույն կարգին համաձայն:

19. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության հիմնավորումն անհրաժեշտ է այն դեպքում, եթե ընտրվել է սույն կարգի 8-րդ, 13-րդ, 16-րդ կետերով չնախատեսված մեթոդ: Եթե մեթոդի գործադրման ծավալը չի գերազանցում ամբողջ դասընթացի համար նախատեսված ծավալի 10 տոկոսը, ապա հիմնավորումը կարող է ընդունվել ամբիոնի վարիչի կամ ծրագրի ղեկավարի կողմից, այլապես՝ հիմնավորումը պետք է ընդունվի պատասխանատու պրոռեկտորի կողմից:

20. Դասավանդման, ուսումնառության և գնահատման ընտրված մեթոդների հաստատումն իրականացվում է կրթական ծրագրերի և դրա բաղադրիչների ծրագրերի հաստատմամբ՝ պատասխանատու պրոռեկտորի կողմից՝ սույն կարգի 8-րդ, 13-րդ, 16-րդ, 19-րդ կետերին համապատասխանության հիման վրա: Ընտրված մեթոդների հաստատման հարցով պրոռեկտորը կարող է դիմել ուսումնական գործընթացի որակի ապահովման փորձագետներին:

21. Դասավանդման մեթոդների գործադրման համար պատասխանատու է դասավանդողը, ով յուրաքանչյուր դասընթացի համար առնվազն մեկ դասաժամ պետք է նաև կազմակերպի հրավիրյալ՝ տվյալ դասընթացի վերջնարդյունքներին համապատասխան փորձ ունեցող մասնագետի կողմից դասավանդում: Սույն կարգին և համապատասխան ծրագրերին հակասող դասավանդումը կարող է դիտարկվել՝ որպես աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարում կամ ծառայությունների ոչ պատշաճ մատուցում:

22. Ուսումնառության մեթոդների գործադրման համար պատասխանատու է ուսումնառողը, սակայն դասավանդողը (կամ կրթական ծրագրի առանձին բաղադրիչի ղեկավարը) պետք է տեղեկացնի ուսումնառողին ուսումնառության նախատեսված մեթոդների և դրանց գործադրման ակնկալվող ծավալների վերաբերյալ:

23. Գնահատման մեթոդների գործադրման համար պատասխանատու են դասավանդողները՝ վերջնարդյունքների ընթացիկ ձևավորվածության գնահատման դեպքում, և համապատասխան գնահատող հանձնաժողովները՝ վերջնարդյունքների վերջնական ձևավորվածության գնահատման դեպքում: Սույն կարգին և համապատասխան ծրագրերին հակասող գնահատումը կարող է դիտարկվել՝ որպես աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարում կամ ծառայությունների ոչ պատշաճ մատուցում:

24. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների գործադրման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է համապատասխան ամբիոնի վարիչի կամ ծրագրի ղեկավարի կողմից՝ որպես պաշտոնական պարտականություն (դասալսումների, հարցումների և այլ ձևերով):

25. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների՝ վերջնարդյունքներին համապատասխանության գնահատումն իրականացվում է ուսումնառողի, դասավանդողի, ամբիոնի վարիչի կամ ծրագրի ղեկավարի, որակի ապահովման ստորաբաժանման, հաստատված փորձագիտական խմբի, պատասխանատու պրոռեկտորի կողմից՝ դասընթացների (կամ կրթական ծրագրի այլ բաղադրիչների) արդյունքների գնահատման գործընթացների շրջանակներում: Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների՝ վերջնարդյունքներին համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա կարող է նախաձեռնվել մեթոդների վերանայում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

26. Սույն կարգն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: